

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿԱՂՆՈՒ ԴԻՂՐՈՊՈՆԻԿ ՏՆԿԻՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ ԴԻԼԻՋԱՆԻ
ԿԵՆՍԱԵՐԿՐԱՅԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ներածություն: Տնտեսական ճգնաժամի հետևանքով Հայաստանում կտրուկ վատթարացած էկոլոգիական վիճակը սրում է կանաչ տարածքների վերականգնման ու ընդլայնման հիմնահարցը, որի լուծման հանգուցային օղակը ծառատեսակների տնկիների արագ արտադրության կազմակերպումն է:

Հանրապետությունում անտառային պետական ֆոնդը 1993թ. հաշվառման արդյունքներով կազմել է տարածքի 11,2%-ը, այսինքն՝ 459,9հազ.հա, որից 334,1հազ.հա անտառածածկ տարածքներ են, այդ թվում, բնական անտառները՝ 282,6հազ.հա, արհեստական անտառները՝ 51,5հազ.հա: 1991-2000թթ. ընթացքում, համաձայն միջազգային կազմակերպությունների դիտորդների տվյալների, հանրապետության անտառներում յուրաքանչյուր տարի հատվել է 700-1000հազ.մ³ անտառանյութ, որի շուրջ 70%-ը՝ ապօրինի (4, 5):

Ներկայումս անտառային տարածքներում, անտառաշինության բացակայության պատճառով, վերը նշված տվյալները պաշտոնապես հաստատված չեն (4): Հաշվարկները ցույց են տվել, որ վերջին տարիների ընթացքում, տարբեր ինտենսիվությամբ, հատվել է շուրջ 27հազ.հա անտառ, որից մոտ 7հազ.հա ամբողջությամբ (ՀՀ անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր): Ցավալին այն է, որ հանրապետությունում կատարվում են ոչ միայն սանիտարական հատումներ, այլև դրանց հետ միասին հատվում են արժեքավոր ծառատեսակներ, մինչդեռ նրանց փոխարեն հետո աճելու են մոլախոտային ծառեր: Մեր հանրապետությունն ունի չորային՝ խիստ ամառ և ծմեռ ունեցող կլիմա և ծովի մակերևույթից մինչև 1500-1600մ բարձրությունների գոլորշիացման ունակությունը 2-4 անգամ ավել է, քան մթնոլորտային տեղումները (1, 2, 5, 6): Ուստի, անտառների ինքնավերականգնման հնարավորությունը ծայրահեղ ցածր է և դրանց ամեն մի կորուստ՝ անդառնալի:

Նշված խնդրի լուծման գործում իր ուրույն տեղն ունի բույսերի անհող մշակույթը (3, 10), որը հնարավորություն է տալիս շատ կարճ ժամկետում (1-3 տարում) կազմակերպել տնկանյութի արագացված արտադրություն, ինչը էապես կնպաստի վերականգնելու Հայաստանի օրեցօր նոսրացող անտառները:

Հանրապետության անտառային հիմնականում կազմավորված են լայնատերև, ամուր թանկարժեք բնափայտ ունեցող ծառատեսակներով (կաղնի-*Quercus* L., հաճարենի-*Fagus* L., բոխենի-*Garpinus* L., թխկի-*Acer* L., հացենի-*Fraxinus* L. և այլն): Ելնելով հանրապետության անտառածածկից, մշակել ենք կաղնու տնկիների և բուսակների անհող աճեցման կենսատեսխնուլոգիա: Հայաստանում բնական պայմաններում համդիպող կաղնու հինգ տեսակներից (արևելյան, վրացական, արաքսյան, երկարակոթուն և ոսկեգույն) (1, 2, 7, 8, 9) փորձարկել ենք արևելյանը, որը ցրտադիմացկուն և երաշտադիմացկուն է, պահանջկոտ չէ հողի նկատմամբ (3, 6, 7):

Կաղնին ոչ միայն աճում է անտառներում, այլ որպես դեկորատիվ և ֆիտոնցիդային հատկություններով օժտված ծառատեսակ, վաղուց ի վեր օգտագործվում է բնակավայրերի կանաչապատման համար: Առանձնապես լայն կիրառում ունի արհեստական անտառատնկման բնագավառում:

Նյութ և մեթոդ: Հետազոտության օբյեկտ է հանդիսացել կաղնի արևելյանը – *Quercus macranthera* Fisch. et Mey., որը պատկանում է հաճարազգիների (*Fagaceae*) ընտանիքին:

Կաղնու սերմերի ցանքսը կատարվել է աշնանը՝ սերմնահավաքից անմիջապես հետո, 3-4մ խորությամբ: 2003-2006թ.թ. ընթացքում

հետազոտությունները կատարվել են ինստիտուտի Դիլիջանի անտառային փորձակայանում (ԴԱՓԿ): Վեգետացիայի ընթացքում կատարվել են տնկիների կենսամետրիկ չափումներ և ֆենոլոգիական դիտարկումներ:

Մեր կողմից բացօթյա հիդրոպոնիկայում, հորախային սև խարամ լցանյութում աճեցված կաղնու բուսակները և երեք տարեկան տնկիները (յուրաքանչյուրից ըսան բույս) տնկարկվել են ԴԱՓԿ-ում:

Տնկարկման ընթացքում երեք տարեկան տնկիների (8-ական տնկի) հետ համատեղ օգտագործվել է տարբեր չափաքանակների 87-С պոլիմեր (սինթեզված է «Երպլաստ պոլիմեր» ՓԲԸ-ում):

Փորձերը դրվել են հետևյալ տարբերակներով.

- | | |
|----|--|
| 1. | Տնկարկման հետ համատեղ տրվել է 1գ/բույս 87-С պոլիմեր; |
| 2. | - // - 2գ/բույս - // - ; |
| 3. | - // - 3գ/բույս - // - ; |
| 4. | - // - 4գ/բույս - // - ; |
| 5. | Ստուգիչ (առանց պոլիմերի): |

Աղոյունքներ և քննարկում: Հիդրոպոնիկայում կատարված հետազոտություններով (3) հաստատվել է, որ կաղնու տնկիների և բուսակների առավել բարձր կաչողականություն, աճ և արդյունավետություն է ապահովել սև հորախային խարամ լցանյութը, որի կիրառմամբ ստացված տնկիները և բուսակները հզոր, փնջաձև արմատային համակարգ են ձևավորում: Տնկիների և բուսակների տեղահանման ընթացքում սև խարամի մանր ֆրակցիաները, արմատային համակարգի հետ միասին, հիմնականում, դուրս են գալիս: Դրանք, առանց թափահարելու, տեղադրում ենք պոլիէթիլենային պարկերում և տեղափոխում տնկարկման վայրը:

2003թ. աշնանից սկսած, վերը նշված բուսակները և երեք տարեկան տնկիները, որոնց միջին բարձրությունը 18,5-118սմ է, իսկ բնի տրամագիծը՝ 5,3 - 21,6մմ, տնկարկվել են ԴԱՓԿ-ում:

Գիտափորձերի արդյունքում պարզվել է, որ սերմնաբույսերի կաչողականությունը կազմել է 90%, իսկ տարեկան միջին աճը շատ ցածր է՝ 3-6սմ, երեք տարեկան տնկիների կաչողականությունը՝ 30%, աճը առաջին տարում՝ 24,6, իսկ երկրորդ տարում՝ 12,1սմ (աղ. 1), ինչը կարելի է բացատրել առաջին տարում տնկիներում աճման և զարգացման համար անհրաժեշտ կուտակված սննդապաշարի առկայությամբ, որը երկրորդ տարում նվազում է:

Աղ. 2-ում ներկայացված է 87-С պոլիմերի տարբեր չափաքանակների ազդեցությունը երեք տարեկան կաղնու տնկիների կաչողականության, աճի և ելանքի վրա:

Աղ. 2-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ ԴԱՓԿ-ի անջրդի պայմաններում տնկարկված երեք տարեկան կաղնու հիդրոպոնիկ տնկիների առավել բարձր կաչողականություն (90-95%) և տարեկան միջին աճ՝ 31սմ, երկրորդ տարում՝ 38սմ, դիտվում է տնկարկման ժամանակ արմատաբնակ մասում 3-4 գ/բույս 87-С պոլիմերի հավելման դեպքում, որոնք զերազանցում են ստուգիչ տարբերակին 3,2 անգամ:

Եզրակացություն: 87-С պոլիմերի 3-4գ/բույս չափաքանակով հավելումը տնկիների տնկարկման ժամանակ, Դիլիջանի կենսատեղաբնակային պայմաններում, ապահովում է դրանց բարձր կաչողականություն և աճ:

Կաղնու հիդրոպոնիկ տնկիների աճն ու զարգացումը ԴԱՓԿ-ում

Տարբերակ	Փորձարկված տնկիների քանակը, հատ	Կաջողակամությունը, %	Ծառաչափական ցուցանիշները							
			Ելային տնկիներ		տնկարկի առաջին տարում		տնկարկի երկրորդ տարում		տարեկան միջին աճը	
			բարձրությունը, սմ	բնի տրամագիծը, մմ	բարձրությունը, սմ	բնի տրամագիծը, մմ	բարձրությունը, սմ	բնի տրամագիծը, մմ	տնկարկի 1-ին տարում, սմ	տնկարկի 2-րդ տարում, սմ
Սերմնաբույս	20	90	18,5	5,3	21,5	7,6	27,9	10,2	3,0	6,4
3 տարեկան տնկի	20	30	116,7	21,6	141,3	23,3	153,4	24,5	24,6	12,1

Կաղնու հիդրոպոնիկ տնկիների աճն ու զարգացումը ԴԱՓԿ-ում՝
87-Շ պոլիմերի կիրառման դեպքում

Տար- բերակ	Կաչո- ղականու- թյունը, %	Ծառաչափական ցուցանիշները									
		Ելային տնկիներ		տնկարկի առաջին տարում		տնկարկի երկրորդ տարում		տարեկան միջին աճը			
								տնկարկի առաջին տարում		տնկարկի երկրորդ տարում	
		բարձրու- թյունը, սմ	բնի տրամա- զիծը, մմ	բարձրու- թյունը, սմ	բնի տրամա- զիծը, մմ	բարձրու- թյունը, սմ	բնի տրամա- զիծը, մմ	բարձրու- թյունը, սմ	բնի տրամա- զիծը, մմ	բարձրու- թյունը, սմ	բնի տրամա- զիծը, մմ
1	30	117,0	22,0	134,0	23,5	143,0	24,6	17,0	1,5	9,0	1,1
2	50	119,0	21,0	137,0	22,3	151,0	24,0	18,0	1,3	14,0	1,7
3	90	118,0	21,0	148,0	23,4	185,0	27,2	30,0	2,4	37,0	3,8
4	95	117,0	22,0	149,0	25,8	189,0	29,0	32,0	3,8	39,0	4,2
5	30	116,0	20,0	133,0	22,3	145,0	23,0	17,0	1,3	12,0	0,7

THE EASTERN OAKS HYDROPONIC SAPPLINGS' TESTING IN DILIJAN BIOGEOCENOSE
CONDITIONS

Summary

The results of investigations have shown, that in DFES non-irrigated conditions the hydroponic saplings of triennial oak have displayed higher engraftment (90-95%) and annual middle growth (31 cm – in the first year and 38 cm – in the second year) in case of adding 87- C polymer in the root zone 3-4 g/plant during the re-plantation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Լ.Վ., Հարությունյան Ս.Լ. Հայաստանի դեմոդոֆլորան, գիրք 1.- "Լույս" հրատարակչություն, Երևան, 1985, էջ 76-192:
2. Հարությունյան Լ.Վ. Կանաչապատվող օբյեկտների մախագծման հիմունքները.- ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1977, 265 էջ:
3. Հովսեփյան Ա.Յ., Էլոյան Ս.Ա., Հայկազյան Վ.Ց. Հիդրոպոնիկան անտառների և պուրակների վերականգնման արդյունավետ եղանակ.- «Ագրոգիտություն», N4, Երևան, 2003, էջ 85-88:
4. ՀՀ Գյուղատնտեսության մախարարություն, Անտառային տնտեսություն, ՀՀ անտառների բնութագիրը, www.minagro.am/antar.asp/, 2006.:
5. ՀՀ Բնապահպանության մախարարության կոլեգիայի արտահերթ նիստ, «Հայանտառ» ՊՓԲԸ, Նոյեմբերյանի անտառտնտեսություն», Երևան, 2000:
6. Варданян Ж.А. Деревья и кустарники Армении в природе и культуре.- Ереван, 2003, 367 с.
7. Гроздьев Б.В. Дендрология.- 2 изд. М.Л., 1960, 487 с.
8. Деревья и кустарники СССР.- М.Л. т.5, 1960, с. 462-474.
9. Колесников А.И. Декоративная дендрология.- Москва, 1971, с. 226-284.
10. Майрапетян С.Х. Культура эфиромасличных растений в условиях открытой гидропоники.- Ереван, 1989, 313 с.